ՀՀ Առողջապահության նախկին նախարար

Արսեն Թորոսյան

Երևան 2021

Կենսագրությունը

- 2004 թ. ավարտել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետը՝ բուժական գործ մասնագիտությամբ:
- 2006թ.ավարտել է ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտը՝ սոցիալական հիգիենա եւ առողջապահության կազմակերպում մասնագիտությամբ, որտեղ էլ 2006-2009 թվականներին ուսումը շարունակել է ասպիրանտուրայում՝ հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում մասնագիտությամբ:
- 2018 թ. Հանդիսացել է «ՀԻՄԱ» քաղաքացիական նախաձեռնության անդամ:
- 2018 թ. օգոստոսից հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ: 2018 թվականի մայիսի 12-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ առողջապահության նախարար:
- 2019 թվականի հունիսի 16-ին տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 5-րդ համագումարի ժամանակ ընտրվել է ՔՊ վարչության անդամ:
- 2021 թվականի հունվարի 18-ին ՀՀ Նախագահի հրամանագրով Թորոսյանն ազատվել է առողջապահության նախարարի պաշտոնից և նշանակվել ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար:

Ուսումնասիրելով Արսեն Թորոսյանի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքում հրապարակված տարեկան հայտարարագիրը պարզ է դառնում, որ նա գերադասում է իր գումարները պահել արտերկրում:

Փաստացի, նախկին Առողջապահության նախարարը 2020թ. հունվարին ավստրիական բանկի (Bank Austria)՝ 20,550 Եվրո արժողությամբ պարտատոմս է ձեռք բերել, որի դիմաց տարեվերջին 428 Եվրոյի չափով տոկոս է ստացել (եկամուտ):

Նախկին նախարարը նաև 32,000 ԱՄՆ դոլարի ավանդ է հայտարարագրել, սակայն թե որ բանկում, նշված չէ: Թորոսյանի բանկային հաշիվների մնացորդը տարեվերջին կազմել է շուրջ 30.000 ԱՄՆ դոլար: Նկատենք, որ եթե ավստրիական բանկի պարտատոմսերի փոխարեն Թորոսյանն իր գումարները որպես ավանդ դներ հայաստանյան ցանկացած բանկում, ապա տերեվերջին առնվազն 600 Եվրո կվաստակեր: Եթե նախկին նախարարը մտածել է իր եկամուտների դիվերսիֆիկացման մասին գումարների զգալի մասը դուրս հանելով երկրից, ապա շարքային քաղաքացիներն ինչպե՞ս պետք է վստահեն ՀՀ բանկային համակարգին, առավել ևս կառավարությանը:

Ի դեպ, մի շարք երկրներում պետական պաշտոնյաներին արգելված է դրսում ունենալ ակտիվներ, քանի որ այդ ակտիվները կարող են դառնալ տվյալ պաշտոնյայի վրա արտաքին ազդեցության գործոն: Իսկ ինչ վերաբերվում է նախկին նախարարի հիմնական եկամուտներին, ապա Թորոսյանը առողջապահության նախարարի պաշտոնում, որպես աշխատավարձ ստացել է 18,6 մլն դրամ (հարկերը պահած): Ստացված աշխատավարձի չափը համեմատելով նախարարի պաշտոնային դրույքաչափերի՝ օրենքով նախատեսված հաշվարկման գործակցի հետ, ստացվում է, որ միայն 2020թ. Թորոսյանը շուրջ 11,5 մլն դրամի պարգևավճար է ստացել (հարկերը պահած):

Նախորդ տարի հիշյալ պաշտոնյան 1116 ԱՄՆ դոլարի եկամուտ էլ ստացել նաև փոխառության դիմաց: Որպես անշարժ գույք Թորոսյանը հայտարարագրել է Երևանի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող բնակելի տուն, ինչպես նաև Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում գտնվող հողատարածք, որը նա 13,6 մլն դրամով ձեռք է բերել 2020թ. սեպտեմբերին:

«Միբս» բժշկական կենտրոն

Նախկիններին բյուջեի թալանի մեջ մեղադրող առողջապահության նախկին նախարար, այժմ կառավարության աշխատակազմի ղեկավար Արսեն Թորոսյանն իր կնոջը պատկանող «Միբս» բժշկական կենտրոնը դարձրել է արտոնյալ կենտրոն:Հարկ է հիշեցնել , որ նախքան նախարար դառնալը Արսեն Թորոսյանն էր զբաղեցնում «ՄԻԲՍ» բուժկենտրոնի տնօրենի պաշտոնը, իսկ նախարար դառնալուց հետո այդ պաշտոնը փոխանցվեց նրա կնոջը:

«Միբս» բժշկական կենտրոնը, որը 2017 թվականին պետպատվերի գումար ընդհանրապես չի ստացել, 2018թ. հեղափոխությունից հետո դարձել է պետբյուջեից ամենաշատ գումարներ ստացող բժշկական կենտրոններից մեկը:

2017 թ. ՀՀ առողջապահության նախարարությունից Արսեն Թորոսյանի կնոջը փաստացի պատկանող բժշկական կենտրոնը 0 դրամ գումար է ստացել, բայց 2018թ. հեղափոխությունից հետո պատկերը փոխվում է՝ Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը, օգտագործելով ի պաշտոնե իրեն ամրագրված լծակները, իր կնոջ ղեկավարած «ՄԻԲՍ» բուժկենտրոնին պետբյուջեից հատկացվող ֆինանսավորումը փասատացի ավելացրել է 7.5 անգամ՝ միայն մի ծրագրի շրջանակներում 7.5 անգամ ավելացել է նախարարի կնոջ ղեկավարած հիմնարկի պետպատվերը 9.5 մլն դառնալով 71. 2 մլն դրամ,որը ոչ այլ ինչ է դա ոչ այլ ինչ է, քան կոռուպցիա 2018-ին «Միբս» բժշկական կենտրոնը ստացել է 25.1 մլն դրամ /52 130 ԱՄՆ դոլար/:

- 2019 թվականին նախարար Արսեն Թորոսյանը իր կնոջը բյուջեից փոխանցել է շեշտակի բարձր թիվ՝ 98.9 մլն դրամ/ 206 800 ԱՄՆ դոլար/ , այսինքն՝ 73.8 մլն դրամով / 154 670 ԱՄՆ դոլար/ ավելի քան 2018թ:
- 2020 թվականին Թորոսյանի կնոջը պատկանող «Միբս» բժշկական բժշկական կենտրոնը ստացել է 127.6 մլն դրամ/ 260 410 ԱՄՆ դոլար/, որն էլ 2019 թվականից ավելի է 28.7 մլն դրամով / 53 610 ԱՄՆ դոլար/:

Որպես հիմնավորում՝ պաշտոնապես նշվում է, թե գումարները փոխանցվել են կատարողականների դիմաց, սակայն ակնհայտ է, որ այստեղ գործում է առաջին հերթին խնամի-ծանոթ-բարեկամ սկզբունքը,այսինքն կլեպտոկրատիայի ակնհայտ դրսևորում:

Ստեղծվում է տպավորություն որ մինչ հեղափոխությունը զրոյական պետական ֆինանսավորում ունեցող բժշկական կենտրոնը նախարար ամուսնու շնորհիվ սկսել է պահանջարկ վայելել և բժշկական կենտրոն այցելուների թիվը կտրուկ ավելացել է:

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ամուսնու՝ Ստեփան Ավանեսյանի կապը նախկին Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի հետ

ՀՀ առողջապահության նախարարը Անահիտ Ավանեսյանը մասնագիտությամբ իրավաբան է: Հայաստանի Հանարապետության պատմության մեջ առաջին անգամ առողջապահության նախարար է նշանակվել ոչ թե բժիշկ կամ հանրային առողջության կազմակերպիչ, այլ իրավաբան: Անահիտ Ավանեսյանը, 2017-ից մինչև Առողջապահության փոխնախարար նշանակվելը եղել է «Աբովյան 39»ՍՊԸ և «Արմֆարմացիա» ՓԲԸ ադմինիստրատիվ գծով տնօրենը: Այնուհետև՝ մինչև 2016 թվականը նշանակվել է վերընշված կազմակերպության գլխավոր տնօրեն:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հրապարակված հայտարարագրի համաձայն՝ Անահիտ Ավանեսյանն ունի բնակարան Արաբկիր վարչական շրջանում, այգետնակ՝ Արագածոտնի մարզի Ղազարավան գյուղում, և բնակելի տարածք՝ կրկին Արաբկիր վարչական շրջանում: Որպես եկամուտ Անահիտ Ավանեսյանը մեկ տարվա համար հայտարարագրել է 12 մլն դրանմ՝ որպես աշխատավարձ, և ևս 11 մլն դրամ՝ որպես շահաբաժին «Աբովյան 39» ՍՊԸ-ից: Հայտարարագրի համաձայն՝ նա այդ ՍՊԸ- ի 50 տոկոսի բաժնետերն է: Այդ ընկերությունը զբաղվում է անշարժ գույքի վարձակալությամբ:

Հարկ է նշել ,որ Անահիտ Ավանեսյանը Արսեն Թորոսյանի ընկերոջ Ստեփան Ավանեսյանի կինն է: Փաստորեն, Արսեն Թորոսյանը լինելով Առողջապահության նախարար իմանալով, որ սույն ոլորտում Անահիտ Ավանեսյանը և իր ամուսինը ունեն որոշակի բիզնես հետաքրքրություններ և շահեր՝ առաջարկել է Անահիտ Ավանեսյանին զբաղեցնել առողջապահության փոխնախարարի պաշտոնը:

Ավանեսյանների ընտանիքին պատկանող «Արմֆարմացիա» ընկերությունը (դեղագործական հայտնի կազմակերպություն է, ինչը նաև հոգեմետ դեղերի խոշոր ներմուծող է) վերջին տարիներին կնքել է 240 պայմանագիր՝ 44 պետական կառույցի հետ, ընդհանուր՝ մոտ 606,7 մլն դրամ արժողությամբ, որի կեսից ավելին՝ 137 պայմանագիրը արդեն Ավանեսյանի՝ փոխնախարար եղած ժամանակ:

Փոխնախարարի ընտանիքին պատկանող ընկերությունը 209,5 մլն ՀՀ դրամի /մոտ 400000 ԱՄՆ դոլարի/ պայմանագրեր ունի տարբեր պետական կառույցների, այդ թվում՝ Առողջապահության նախարարության և նրա ենթակայության տակ գտնվող կառույցների հետ:

Պայմանագրերի մոտ 43%-ը (262 մլն դրամ) կնքվել է Առողջապահության նախարարության հետ, հաջորդ խոշոր գնորդը Պաշտպանության նախարարությունն է ՝ 15% (մոտ 88 մլն դրամ), ապա ԵՊԲՀ հիմնադրամը՝ մոտ 10% (57 մլն դրամ):

Անահիտ Ավանեսյանի ամուսինը՝ Ստեփան Ավանեսյանը իր ընկեր Ալան Գոգբաշյանի հետ 2000 թվականին Հայաստանում հիմնել է «Առաջնորդների զարգացման կենտրոն» ուսումնական դասընթացները, որի հիմնական նպատակն էր պատրաստել նոր առաջնորդներ, որոնք «կփոխեն իրերի ընթացքը»: «Առաջնորդների զարգացման կենտրոնը» գործել է Հայ Ավետարանչական Ընկերության հովանու ներքո: Ալան Գոգբաշյանը եւ Ստեփան Ավանեսյանը մեծ ցանկություն են ունեցել երիտասարդներին ներկայացնել առաջնորդության նոր մոդել՝ հիմնված աստվածաշնչյան արժեքների եւ քրիստոնեական սկզբունքների վրա: «Երիտասարդների ջանքերով հնարավոր կլինի հաղթահարել երկրի առջեւ ծառացած բոլոր սոցիալական եւ տնտեսական դժվարությունները: Երիտասարդները կփոխեն ամեն բան: Երբ նրանք գան իշխանության, ամեն ինչ այլ կերպ կլինի»,- ասել էին կենտրոնի հիմնադիրները Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության թերթին տված հարցազրույցում: 2008 թ. Ալան Գոգաբաշյանը սկսում է աշխատել Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունում իսկ 2019թ. նշանակվում է Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան:

Training the Future Leaders of Armenia

Many people in Armenia look to the young generation as the panacea for the social and economic difficulties facing the country today. "The youth will change things. Once they are in power everything will be different" is a common phrase on the lips of a tired generation of people yearning to see a ray of hope on the horizon.

Stepan Avanesian and Alan Gogbashian, founders of the Center for Leadership Development which opened in Yerevan in September 2000, agree with this cry of the heart. But they also know that unless the young leaders of tomorrow are trained and shown a new model of leadership, the new generation will simply follow the ways of the old.

Stepan and Alan's desire is to present a new model of leadership, one based on biblical values and Christian principles of service, to young professionals who in just a few years' time will become Armenia's decision makers.

skills we teach plus a commitment to God's standards, we believe these future leaders can have a powerful impact in Armenia for the lasting good."

The Center is a vibrant place where students are encouraged to form an active community, brainstorm ideas and pick the brains of visiting faculty. It is also a place of trust and openness. There is a real sense of togetherness and a desire to realize a common dream. Stepan looks back at how God made this all happen: "I was blessed to be able to train in theology at London Bible College. The AMAA paid for my tuition and living expenses during my three years of study and I am so grateful for the opportunities this

Stepan Avanesian (1st left) and Alan Gogbashian (3rd left) with graduating students Khoren Mardoyan and Sona Hovsepyan.

ply wouldn't be able to do what I am doing now in Armenia. That experience changed my life forever."

This strategic ministry needs your prayers. Proverbs 29 teaches that "when the righteous are in authority, the people rejoice." Please join with the leaders of the Center in asking God to help prepare a generation of righteous leaders who cause the people of Ar-

Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը իր պաշտոնը օգտագործել է նաև ի շահ կուսակցական և քաղաքական հարցերի լուծման համար՝ այսպես

2.7 միլիարդ դրամ Արսեն Թորոսյանն փոխանցել «Աստղիկ» ԲԿ-ին, որի սեփականատերը Սամվել Ալեքսանյանն է նախորդ տարվա համեմատ 1 միլիարդ դրամով ավելացնելով է «Աստղիկ» ԲԿ-ի բյուջեն, ինչի արդյունքում հիվանդանոցի աշխատակիցները միաբերան հայտարարեցին , որ իրենք ամբողջովին կողմ են նախարարի բարեփոխումներին և կողմնակից են իշխող կուսակցությանը, որը ոչ այլ ինչ է քան պետական միջոցներով/ հարկատուների գումարներով/ լուծել ներքաղաքական և կուսակցական խնդիրներ:

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐ /2019թ./

Արսեն Թորոսյանը ստացել է 14.834.904 դրամ պարգևավճար:
Լենա Նանուշյանը /նախարարի տեղակալ/ ստացել է 9.371.014 դրամ:
Անահիտ Ավանեսյանը / նախարարի մեկ այլ տեղակալ/ստացել է 9.672.612 դրամ:
Արտյոմ Սմբատյանը / նորանշանակ փոխնախարար/ ստացել է 7.300.757 դրամ:
Լևոն Հակոբյանը / փոխնախարար / ստացել է 7.132.109 դրամ:
Հովհաննես Հարությունյանը / պաշտոնաթող փոխնախարար/ ստացել է 5.035.635 դրամ:
Ծավարշ Գրիգորյանը / նորանշանակ փոխնախարար/ ստացել է 1,661,447 դրամ:
Վահե Հակոբյանը / նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ/ ստացել է 2,563,454 դրամ պարգևավճար:
Ծաղիկ Վարդանյանն / ԱՆ Պետական առողջապահական գործակալության պետ/ ստանցել է 2,900,107 դրամ պարգևավճար:
Վահե Ալեքսանյանը / լիցենզավորման գործակալության պետ/ ստացել է 3,696,628 դրամ:

Մարտի 8-ի կապացությամբ Արսեն Թորոսյանը ինքն իրեն պարգևատրել է 2 մլն 381 հազար դրամով, որը մոտ 5000 ԱՄՆ դոլար է կազմում: